MAR 2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ

347
Ч-21

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ԱՐԴԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1935

ՀՍՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴ. ԳՐԱԴԱՐԱՆ
Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ. Գ.
ՀՍՍՀ

37.287

17 MAY 2013

Հաստատված ԱՍՖԽՀ Կենտգործկոմի
նախագահության կողմից 7/VIII 1932 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ

(Հաստատված է ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից
1932 թ. դեկտեմբերին)

Կոլտնտեսությունների հանրայնացված գույքի հետ անտնտեսավար վերաբերմունքի, կոլտնտեսությունների աշխատանքային կարգապահության խախտումների և հին կենցաղի բացասական մնացորդների դեմ պայքարելու, կոլտնտեսությունները կազմակերպչորեն և տնտեսապես ամրապնդելու համար մղվող պայքարին կոլտնտեսական լայն մասսաների ակտիվությունն ու հասարակական ներգործությունն ուժեղացնելու և կոլտնտեսական մասսային սոցիալիստական սկզբունքներով վերադաստիարակելու նպատակով՝ կոլտնտեսություններում, կոմունաներում, գյուղատնտեսական արտելներում կազմակերպվում են Ընկերական դատարաններ։

1. Ընկերական դատարանները կազմակերպվում են այն բոլոր կոլտնտեսություններում, որոնց անդամների թիվը 50-ից պակաս չէ։

2. Կոլտնտեսությունների ընկերական դատարաններն ընտրվում են կոլտնտեսականների ընդհանուր ժողովներում, կոլտնտեսության բանվորների ու ծառայողների մասնակցությամբ, հաշվածային կոլտնտեսականների թվից՝ մինչև 1 տարի ժամանակով և հետևյալ կազմով՝ նախագահ, մեկ կամ յերկու տեղակալներ և ընկերական դատարանի 10-ից 15 անդամներ։ Ընկերական

347
Ա-92

դատարանի անդամների թիվը սահմանում են կոլտնտեսականների ընդհանուր ժողովները։

Ընկերական դատարանի նախագահին և նրա տեղակալներին հաստատում է գյուղական խորհուրդը։

Յերբ ընկերական դատարանի նախագահը, տեղակալները և անդամները չեն արդարացնում կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վստահությունը, կարող են ժամանակից շուտ հետ կանչվել ընտրվողների կողմից, ընկերական դատարան ունեցող կոլտնտեսության բոլոր անդամների թվի վոչ պակաս, քան 1/3-ի պահանջով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ընկերական դատարանի նախագահը, տեղակալները և անդամները վոչ մի վարձատրություն չեն ստանում և իրենց պարտականությունները կատարում են հասարակական ծանրաբեռնման կարգով։

3. Կոլտնտեսությունների ընկերական դատարանները քննում են հետևյալ գործերը.—

ա) Կոլտնտեսության հանրայնացված գույքի (մեքենաների, անասունների, գյուղատնտեսական ինվենտարի, շենքերի և այլն) նկատմամբ սիստեմատիկաբար ցուցաբերված անտնտեսավար և անփույթ վերաբերմունքը։

բ) Կոլտնտեսականների կողմից աշխատանքային կարգապահության խախտումները (վոչ հարգելի պատճառներով չաշխատելը, հաճախակի ուշացումները, հարբած վիճակում աշխատանքի գալը և այլն)։

գ) Կոլտնտեսության ներքին կարգ ու կանոնի խախտումները և վարչության ու բրիգադիրների կարգադրությունները սիստեմատիկաբար չկատարելը։

դ) Հանձնարարած աշխատանքի անբարեխիղճ կատարումը (անասունների նկատմամբ անհոգատար վերաբերմունքը, կոլտնտեսության անդամների համար սահմանված չափից ավելի խոտան արտադրելը և այլն)։

յե) Բրիգադիրի անփութության հետևանքով անհրաժեշտ ագրո-զոոտեխնիկական ձեռնարկումներ չգործադրելը, նաև գործավարձով աշխատող կոլտնտեսականների աշխատանքի սխալ հաշվառումն ու կոլտնտեսականների աշխատանքի ծավալի սխալ

սահմանումը, վոր բրիգադիրը կատարել է դիտավորյալ կերպով կամ իր պարտականություններին անփույթ վերաբերվելու պատճառով։

զ) Կոլտնտեսության տերիտորիայի վրա կոլտնտեսականների մեջ առաջին անգամ կատարված գողությունը, նրանց գույքի փչացումն ու վոչնչացումը, եթե պատճառած վնասի չափը 50 ռուբլուց ավելի չէ։

է) Կոլտնտեսականների աշխատանքային գրքույկներում ստորագրությունները կեղծելը։

ը) Այն սրիկայությունները, վորոնց առթիվ քրեական հետապնդումն չի պահանջվում, կամ հասարակական կոլեկտիվի պահանջներին անհամապատասխան այլ վարմունքը, վորն արտացոլում է հին կենցաղի բացասական յերևույթները (հարբեցողություն, հայհոյանք, հերյուրանքներ, վայրագություններ և այլն)։

թ) Առանց մարմնական վնասվածքների հարվածներ հասցնելը։

ժ) Այլ անձանց վարկաբեկող, ակնհայտնի սուտ տեղեկություններ տարածելը։

ի) Խոսքով, գրավոր կամ գործողությամբ հացրած վիրավորանքները։

լ) Կոլտնտեսականների մեջև ծագած գույքային վեճերը, վորոնց գումարը 50 ռուբլուց ավելի չէ։

4. Հիշյալ գործերը ընկերական դատարանները քննում են.—

ա) Ցերը կողմ են հանդիսանում միևնույն կոլտնտեսության անդամները։

բ) Ցերը կողմ են հանդիսանում տարբեր կոլտնտեսությունների անդամները, այդ դեպքում այն կոլտնտեսության ընկերական դատարանը, վորի անդամ է հանդիսանում պատասխանողը կամ զանցառուն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն գործերը, վոր կապված են կոլտնտեսության աշխատանքների արտադրական հարցերի հետ (կոլտնտեսությունների գույքի նկատմամբ ցուցաբերած անտնտեսավար վերաբերմունքը, կոլտնտեսության աշխատանքային կարգապահության և ներքին կանոնադրության խախտումները և այլն), վորպես կանոն, ծագելու դեպքում անմիջապես լուծում են կոլտնտեսության վարչությունները և քննվում են ընկերական դատարանի կողմից, յերբ կոլտնտեսության վարչությունը հանձնում է այն ընկերական դատարանին։

5. Ընկերական դատարանների քննությանը յենթական չեն՝

ա) Այն վեճերը, վոր ծագում են առանձին կոլտնտեսականների կամ մի խումբ կոլտնտեսականների և կոլտնտեսության միջև և կրում են գույքային բնույթ։

բ) Աշխատանքային, հողային գործերը, նաև այն գործերը, վոր կապված են տնտեսական-քաղաքական կամպանիաների իրականացման հետ, ինչպես և կոլտնտեսականների դեմ ուղղված գույքային հայցերը, վոր ներկայացվում են պետական հիմնարկների և հասարակական կազմակերպությունների կողմից։

գ) Այն գործերը, յերբ մի կողմ կամ յերկու կողմ են հանդիսանում մենատնտեսները։

դ) Այն գործերը, վոր կոլտնտեսության ընտրովի մարմինների կողմից կամ կոլտնտեսականների ընդհանուր ժողովների վորոշմամբ ուղարկվում են գյուղական հասարակական դատարաններին՝ ի քննություն։

6. Եթե ընկերական դատարանը գործը քննելու ժամանակ պարզի, վոր այս կանոնադրության 3 հոդվածի համաձայն ինքն իրավասու չէ քննելու այդ գործը (հայցի գումարի կամ վեճի առարկայի տեսակետից), կամ թե տվյալ արարքի համար դատի յենթարկված անձանց նկատմամբ պետք է կիրառվի ներգործության ավելի խիստ միջոցներ, քան այն, վոր նա կարող է կիրառել, ապա ընկերական դատարանն այդ գործն ուղարկում է համապատասխան դատական մարմին՝ ի քննություն։

7. Ընկերական դատարանում գործերը քննվում են շահագրգռված անձանց, կոլտնտեսությունների, հասարակական կազմակերպությունների, դատախազությանը կամ բրիգադիրին աջակցող խմբակի թե բանավոր և թե գրավոր դիմումի հիման վրա, նաև ընկերական դատարանի նախաձեռնությամբ։

8. Ընկերական դատարանը գործը պետք է քննության առնի դիմումն ստանալու պահից վոչ ուշ, քան 5 որվա ընթացքում։

9. Ընկերական դատարանների աշխատանքները կաշկանդված չեն դատավարության ձևական կանոններով և կատարվում են այս կանոնադրության մեջ սահմանված կանոններով։

Ընկերական դատարաններում դատավարությունն ազատ է ամեն տեսակի դրամական և այլ գանձումներից։

10. Ընկերական դատարաններում գործերը քննվում են

գանքաց նիստում, վորպեսզի կոլտնտեսականները դատարանում վորպես կողմ կամ վկա մասնակցելու համար հետ չմնան իրենց աշխատանքից, ընկերական դատարանների նիստերը գումարվում են հանգստի որերին, աշխատանքի վայրում՝ դաշտում, բրիգադայում՝ ընդմիջումների ժամանակ։ Ընկերական դատարանի նիստի մասին պետք է հայտարարվի վաղորոք՝ նիստից 3 որ առաջ։

Ընկերական դատարանի գրասենեկային տեխնիկական սպասարկումը՝ ինչպես, որինակ, թուղթ, շենք, ծանուցումների առաքում և այլն իրականացվում է ընկերական դատարան ունեցող կոլտնտեսության վարչության ապարատի միջոցով։

11. Գործին մասնակցող կողմերը կարող են բացարկ հայտնել ընկերական դատարանի անդամների կամ նախագահի դեմ, հիմք ունենալով ընկ. դատարանի անդամների կամ նախագահի և այս կամ այն կողմի ազգակցական կապերը, կամ թե կողմերից մեկի հետ ունեցած վորոշ վերաբերմունքը (վեճ, թշնամություն և այլն)։

Ընկերական դատարանի անդամների կամ նախագահի դեմ հայտնված բացարկի շարժառիթների հիմնավորված լինելը քննում են ընկերական դատարանի մյուս անդամները, վորոնց դեմ բացարկ չի հայտնված։ Եթե բացարկի պատճառները համարվեն բավարար, ընկերական դատարանը, չհետաձգելով գործը, նիստին մասնակցելու համար հերթականության կարգով հրավիրում է ընկ. դատարանի մյուս անդամներին։

12. Ընկերական դատարանը գործի քննության ժամանակ պարտավոր է կանչել գանգատավորին, պատասխանողին, հանցանք կատարողին, վկաներին (յեթե գործի համար վերջիններին կանչելն անհրաժեշտ է), լսել նրանց բացատրությունները և անհրաժեշտության դեպքում հարցաքննել գործի վկաներին, տեղում կատարել զննություն և միջոցներ ձեռք առնել՝ գործի բոլոր հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու համար։

Եթե գործին մասնակցող անձինք ծանուցումն ստանալուց հետո չեն ներկայանում դատարանին, ապա ընկերական դատարանը կարող է գործի քննությունը հետաձգել՝ չներկայացողներին կրկին կանչելու համար, կամ գործը քննել կողմերի բացակայությամբ, կամ թե բոլորովին կարճել։

13. Ընկերական դատարանների վորոշումներն ընդունվում

են ձայների մեծամասնությամբ, շարադրվում են համառոտակի գրավոր կերպով և հրապարակորեն հայտարարվում են գործին մասնակցողներին։

14. Զանցառուների նկատմամբ ընկերական դատարանները կարող են կիրառել ներգործության հետևյալ միջոցները.—

ա) Նախազգուշացում։

բ) Հասարակական պարսավանք, հրապարակելով կամ չհրապարակելով պատի թերթում կամ ընդհանուր մամուլում։

գ) Պարտավորեցնել զանցառուին վերացնել իր կատարած սխալը, քաղաքական կամ տեխնիկական անգրագիտությունը, նշանակելով դրա համար վորոշ ժամանակամիջոց։

դ) 10 ռուբլուց վոչ ավելի տուգանք՝ հոդուտ հասարակական կազմակերպությունների (ՄՈՊՐ-ի բջիջ, Մանուկների Բարեկամների Ընկ., Պաշտ-ավիաքիմ, անգրագիտ. վերացման կուլտ հանձնաժողով, կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային դրությունն բարելավման ֆոնդ և այլն)։

յե) Պատճառած վնասի հատուցում, յեթե այդ վնասը 50 ռ. ավելի չէ։

զ) Հարց հարուցել կոլտնտեսության վարչության առաջ՝ զանցառուին կոլտնտեսության անդամների շարքից վտարելու մասին։

ը) Հարց հարուցել կոլտնտեսության վարչության առաջ բրիգադիրին աշխատանքից հեռացնելու մասին, նաև հարց հարուցել կոլտնտեսականին մի աշխատանքից այլ աշխատանքի փոխադրելու մասին՝ նկատի ունենալով կոլտնտեսության արտադրական շահերը։

15. Եթե գործի քննության ընթացքում դատարանը պարզի, վոր կողմերից մեկը կամ քննվող գործի հետ կապ ունեցող այլ անձինք իրոք կատարել են հարվածային աշխատանքներ, ապա ընկերական դատարանը պարտավոր է կոլտնտեսության վարչության առաջ հարց հարուցել՝ աշխատանքի ֆրոնտում աչքի ընկնողներին պարգևատրելու մասին։

Եթե գործի քննության ընթացքում պարզվի, վոր արարքը կամ այլ անկանոն գործողությունները կատարել են կոլտնտեսության վոչ անդամ բանվորները և ծառայողները, ապա ընկերական դատարանը կարող է կոլտնտեսության վարչության առաջ հարց հարուցել մեղավորին աշխատանքից հեռացնելու մա-

405

սին, նաև արհմիութենական կազմակերպությունների առաջ հարց հարուցել՝ արհմիությունից նրանց վտարելու մասին։

16. Ընկերական դատարանի վորոշումները վերջնական են, յենթակա չեն գանգատարկման և անմիջապես ի կատար են ածվում, սակայն կարող են վերացվել ժողովրդական դատարանի կողմից՝ հսկողության կարգով։

17. Ընկերական դատարանի վորոշումը կամովին չկատարելու դեպքում, այդ վորոշումն ի կատար է ածվում հարկադրական կարգով և անհրաժեշտության դեպքում՝ դյուղական կատարածուների միջոցով։

Վորոշումներն ի կատար ածելու համար ընկերական դատարանը տալիս է իր վորոշման պաճենը՝ կատարման մակագրությամբ։ Այդ պաճենն ունի ժողովրդական դատարանի կատարողական թերթի ուժ։

18. Ընկերական դատարանների կազմակերպչական աշխատանքները (կազմակերպության, վերընտրության, հսկողության գործերի ընթացքի ժամկետների, վորոշումները ժամանակին կատարելու նկատմամբ և այլն) ղեկավարում են կոլտնտեսության վարչությունը, շրջանային կոլտնտեսությունը և կոլտնտկենտրոնը։ Ներկայումս վերացված լինելով շրջանային կոլտնտմիությունն ու կոլտնտկենտրոնը նրանց վերապահված ֆունկցիան կատարում են շրջհողբաժինը, շրջգործկոմն ու հողժողկոմատը։

19. Ընկերական դատարանների գործառնական աշխատանքները ղեկավարում ու հսկում են ժողովրդական դատարանները և ՀՍԽՀ Գերագույն Դատարանը։ Ժողովրդական դատարանը ընկերական դատարանի վորոշման մեջ հայտաբերելով որենքի եական խախտումներ, կամ թե պարզելով, վոր քննված գործը յենթակա չեր ընկերական դատարանի իրավասությանը, նաև այն, վոր գործը քննվել է դատարանի վոչ որինավոր կազմով, կասեցնում է վորոշման կատարումը և գործն ընդունում է իր վարույթում՝ ըստ էության քննելու համար։

Սեվան-Ռանաքեռշինի տպարան

Գլավլիտ № 254

ՀՍԽՀ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան

NL0221352

37. 287